Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Կոտայքի մարզի « Ծաղկաձորի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականություն (28 դասաժամ), ֆիզկուլտուրայի (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար :

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման :

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի :

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը , որին հավակնում է (Ձև 1) ,

Փաստաթուղթ (դիպլոմ)՝ « Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

2. Անձնագրի պատճենը ,
3. Ինքնակենսագրություն (Ձև 4),
4. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի , հավաստագրերի պատճեները (դրանց առկայության դեպքում) ,
5. Մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի ,
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ :

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ :

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 29-ը ներառյալ , ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը , բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից :

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի :

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 1-ին՝ ժամը 14:00-ին,Կոտայքի մարզի Ծաղկաձորի միջնակարգ դպրոցում՝ հասցեն ք. Ծաղկաձոր ,Մայիսյան 15 :

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 38-61-28 հեռախոսահամարներով :